



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՊԱՑՈՅՑ

ԱՌԱՔԵԼԱԴԻՐ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

ԽԱԶԵՑԱՐԻՒ ԵՐԳԵԼՈՅ

ԳՐԵԱԼ

Ի ԹԱԴԷՈՍ ՄԻՀՐԴԱՏԵԱՆԻ

ԳՈՐԾ ԺԵՐԴ ՀԵՂԻՆԱԿԻՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՅԱՏԵԱՆ

— 1871 —


656 2 0 4.

Ա. ՊԱՅՈՅՑ

ԱՌԱՔԵԼԱԴԻՐ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ


ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

ԽԱԶԵՑԱՐԻԻ ԵՐԳԵԼՈՅ



ԳՐԵԱԼ

Ի ԹԱԹԻՈՍ ՄԻՀՐԳԱՏԵԱՆԷ



ԳՈՐԾ ԺԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Թ. Ա. 6992



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՅԱՅԵԱՆ

— 1871 —

ՅԵՌԵՅԱՊՈՒ

ՄԱՍԻՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍԻՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵՌԵՅԱՊՈՒ

ՄԱՍԻՍ

ՄԱՍԻՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍԻՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՄԱՍԻՍ

ՄԱՍԻՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ՊԱՅՈՅՅ

ԱՌԱՔԵԼԱԴԻՐ ԱԻՆԴՈՒԹԵԱՆ

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

ԽԱՉԵՑԱՐԻԻ ԵՐԳԵԼՈՅ



Այս օրերս Հակահասունիսդ Հռովմէականաց նոր հրատարակած Ժամագիրքը որուն մակագիրն էր «Կարդաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ» այս դրութիւնը քննադատելով, յիշեցինք ժամանակաւ հրատարակեալ Զօհալ անուն կիսամետայ տետրակին մէջը . Ազգային հերձուածողներուն համար՝ «Սուրբ Աստուածը», որ օրինակ բերելով կը յանդիմանէ Պատուելին, թէ՛ ինչպէս այս հին կաթողիկէ Սուրբ Եկեղեցւոյ նախնի արարողութիւնը փոփոխեցին . և կ'ապացուցանէ ալ Մարօնի ազգը որ հաւատով իրենց պէս Հռովմէականութեան դարձած ըլլալով, մինչեւ յ'արդ «Սուրբ Աստուածը» խաչեցարիւ կ'երգեն . և յայսմ մասին նախնական եկեղեցւոյ աւանդութեանը և արարողութեանը վրայ հաստատ կը կենան եւայն . (Ասկից կը հետեւի, թէ Հռովմի հայրապետը ու եկեղեցին, միայն Հայոց եկեղեցւոյ արարողութեանը դէմ կուզէ

ամեն խստութիւնը բանեցնել, մեր անխորհուրդ ու կամակոր բաժանելոց շողոքորթութեամբը) : Մենք ալ այս կարեւոր խնդիրը կարդալով, յորդորուեցանք նոյն Պատուելոյն համառօտ գրութենէն՝ ըստ բուականին կատարեալ տեղեկութիւն մը տալ՝ սոյն խնդրոյն վրայօք, ընդհանուր եկեղեցւոյ համաձայն վրկայութեամբ. որ՝ կամ Ազգիս չգիացողները գիտնան, և կամ առաւել եւս Յունաց և Հռուովմայեցւոց դայթակղեալ միտքերը բժըշկուին. որոնք որ՝ տգիտաբար միշտ բերաննին « անիծիւք և դառնութեամբ լի են » մեր վրայ . թէ՛ ինչո՞ւ Սուրբ Աստուածը խաչեցարով կ'երգեմք :

Արդ՝ Յոյները, խաչ վերացի թափօրին, ինչուան այս օրս կ'երգեն « Սուրբ Աստուածը » . որ յատկապէս ՚ի դէմս Որդւոյ և որ նոյնն է խաչեցելոյն Քրիստոսի կը վերաբերի. որպէս զի՝ մեր Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին կը կատարէ նոյն հանդէսը « Սուրբ Աստուածն » երգելով : Եւ է ապացուցական յիշատակ մեր նախնի աւանդութեան . եթէ այս երգը նախ և առաջ Յովսէփ Արեմաթացին զրուցած է առ խաչեալն Յիսուս . որուն յիշատակը ամեն եկեղեցիները կը վկայեն կերպ առ կերպ իրենց արարողութեամբը . ինչպէս Յոյները նաեւ նրնջեցելոց յուղարկաւորութեան առջեւէն նոյն Սուրբ Աստուածը կ'երգեն, որ իբր թէ խա-

չեցեւոյն Յիսուսի մահակից եղած է ննջեցեալը՝ ու անկէ ողորմութիւն կը հայցէ . ինչպէս որ նոյն երգը Յովսէփ Արեմաթացին առ խաչեալն և մեռեալն վասն մեր Յիսուս Քրիստոս երգեց : Եւ Սուրբ Եպիփան Կիպրացին կը դըրէ . « Եւ իբրեւ 'ի խաչէն իջուցանել կամեցան , բերեալ սանդուխս , և ըստ բարձրութեան խաչին կանգնեալ . ուստի և կամեցան ունելեօք իբրեւ բռնութեամբ հանել զբեւեռան Սատուածային մարմնոյն , և ոչ կարացին միանգամ և երկիցս . ինքն իսկ երանելին Յովսէփ և Նիկողիմոս իսկոյն առ Յիսուս ապաւինեալ . և տարածեալ զբազուկս իւրեանց խաչանման առաջի տեառն՝ զկուրծս բաղխելով մաղթէին պաղատանօք բարեխօս ունելով զկոյսն սուրբ :

« Ուստի և առժամայն նոյն ինքն Մայր Տեառն , և Յովհաննէս ընդ նմին , և ամենայն աշակերտեալ կանայք՝ փոխարկեալ զմաղթանս աղօթիցն դառն արտասուօք լալականաց եղանակաւ խնդրէին : Եւ համարձակեալ Յովսէփ յաղօթս նոցա , մերձ կացեալ սկսաւ ասել լալով և հեկեկելով , հայէր եւս երկիրդիւ հանդէսն սրովբէից , Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս խոնարհեաց 'ի գիրկս ծառայից քոց բարեխօսութեամբ Մօր քո . որ կայ առաջի քո պաղատանօք , որ և ընդ մեռեալս համարեալ է վասն քո . տեսանելով զքեզ մահացեալ : իսկ Տէրն որ կամաւ ետ զանձն 'ի խաչ , կամաւ խո-

նարհեալ 'ի բարձրութենէ խաչին , բազմեցան 'ի վերայ լանջացն Յովսեփայ մեծապայծառ փառօք , որպէս 'ի վերայ քերովրէական աստուոյն և ընդ աջմէ Հօր եւայլն . ('ի խորհուրդ թաղման տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . Ճառ ԼԷ . 151 ձեռագիր) : Այս բանը՝ Ղազար Ջահկեցի և Յակոբ Նալեան Աստուածաբան վարդապետները , Սոկրատ պատմագրէն և նախնի աւանդութենէն առնելով կրսեն . թէ՛ « Սկսեալ յառաքելոցն մինչ 'ի վեց հարիւր ամն միարան ասացին զԽաչեցարն , յերիս սրբասացութիւնս » . . . : Դարձեալ (գտանեա գրեալ 'ի Սոկրատի անդ զգիրն Նեքատուեայ եպիսկոպոսապետին նոր Հռովմայ . որ ասէ) « Արդ՝ սչ եղև հնար Յովսեփայ (Արեմաթացոյն) զմարմինն տեառն իջուցանել 'ի խաչէն , կամ դրեւեռսն թափել . զի 'ի փորումոյ ձեռացն փայլատակունք ճառագայթից անպատմելի լուսոյ հատանէին . մինչև համբարձեալ զձեռս իւր և երիցս անդամ ասաց , « Սուրբ Աստուած , սուրբ և հզօր , սուրբ և անմահ՝ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ : Եւ սպա՛ էջ մարմինն 'ի վերայ բազկացն Յովսեփայ , (զոր) պատեաց և թաղեաց » :

Ասոր ետեւէն կը յարէ՛ նոյն Ջահկեցին . թէ՛ « Օրեղիանոս Հռովմայ եպիսկոպոսապետն ասէ . արդ՝ յաւուրս առաքելոցն երիցս անդամ ասէին զսուրբ Աստուածն որ խաչեցար :

և զկնի փոխմանն Աստուածածնին՝ Հոգին Սուրբ
 ազդեալ 'ի թովմաս , ասաց՝ « զՓառաւորեալ և
 օրհնեալ միշտ Սուրբ Կոյան՝ կցորդիւ : (ՈՐ
 հնագոյն ձեռագիր օրինակները միշտ « թով-
 մայի կրնծայեն » փարաւորեալին վերնագիրը
 « 'ի Սրբոյն թովմայէ » կամ « 'ի թովմայէ ա-
 ուաքելոյն ասացեալ » ըսելով) : Չոր առեալ
 Սուրբ առաքելոցն կարդեցին զկնի Սուրբ Աս-
 տուածին . որ է սոցոք վկայ խաչեցարին . ըզ-
 Մայրն առ որդին բարեխօս ունեալ : Եւ մեք
 ոչ 'ի դէմն (ասէ) Երրորդութեանն . և ոչ 'ի
 դէմն պարզ Աստուածութեան որդւոյն երգեմք
 զՍուրբ Աստուածն , այլ 'ի դէմն Քրիստոսի
 Աստուծոյ : Ուստի յայտ է յաւարտ աղօթիցն .
 այսինքն՝ Գոհանամ զքէնին , և Լաւ ձայնիցին .
 որ ասի՝ Քրիստոս Աստուած մեր : Եւ յաւարտ
 Սուրբ Աստուածին՝ ասի , « Մայր Քրիստոսի մա-
 տն զաղաչանս մեր , Որդւոյ քոյ և Աստուծոյ
 մերոյ » : (Ղազար Չահկեցի , Դրախտ ցանկա-
 լի . երես 252 . և Յակոբ Նալեան , վեմ Հա-
 ւատոյ . 618) :

Նաեւ ունինք հաստատութիւն մեր Եկե-
 ղեցւոյ աւանդութեան վաւերականութեանը՝
 Սուրբ Ներսէս Լամբրոնացիէն , որուն ատենը
 Յոյնք՝ երբոր այս խնդրոյն վրայօք կը վիճէին ,
 ինքը Երանելին հաստատուն վկայութեամբ
 անպատասխանի ըրաւ Յոյները . ըսելով այս-
 պէս՝ « Եթէ ասէաք առ Քրիստոս , « սուրբ Աս-

տուած , սուրբ և հզօր , սուրբ և անմահ ու
ղորմեացի մեզ » . պարտ էր գայթակղել , իբր թէ՛
զչնորհն մարդեղութեան և վասն մեր չարչա-
րանացն զլացեալ ամօթ համարիմք : Իսկ ա-
պա թէ պարծանօք զնոյն դաւանիմք ըստ խրա-
տոյն Պօղոսի , « Ինձ մի լիցի , ասէ . յայլ պար-
ծել . բայց միայն 'ի Խաչ տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի . ընդէր ըստ գտանիմք յեղբարցդ ,
թերեւս զի Աստուած ասեմք խաչեալ և ոչ
Քրիստոս . աղաչեմք և մի առ այս տկարա-
նայք , զի զխաչն յաւելլով բաւական է մարմ-
նոյն տարացոյց առ 'ի միտս գիտութեան , և
ճողոպրիչ Աստուածաչարչարութեան կար-
ծեաց : Իսկ զեւն յաւելումք վասն հոլովման
բանին . զի սուրբ բայ՝ կարճ է 'ի մերս բար-
բառ , և ոչ կարէ հոլովիլ , և 'ի միւսն յարակ-
ցել , որպէս և 'ի ձերդ այիօսն : Ի վերայ այսո-
րիկ գտանեմք , և առ 'ի մէնջ սրբաբանու-
թեանս Քրիստոսի , զձեզ վկայս . զի կայ արդ-
եւս յարձանս փորագրեալ գրով ձեր 'ի Դա-
մասկոս և 'ի Մամեստիա . Սուրբ Աստուած ,
սուրբ և հզօր , սուրբ և անմահ , որ խաչեցար
վասն մեր ողորմեացի մեզ : Որովք ուսանիմք թէ՛
և 'ի ձէնջ ուսաք զայս սրբերգութիւնս այս-
պէս երգել . և ոչ անձամբ անձին գտեալ : Իսկ
եթէ ոյր աղագաւ անտես արարիք զառ 'ի
հարցն եղեալ աւանդութիւնս , տղիտանամք :
Եւ վասն յոմանց անպատշաճ լուեալ բարբա-

ռին դայթակղիմք . թէ՛ մանուկն 'ի յօդ վերացաւ , և զծերունեաց աւանդութիւն այլայլեաց » . եւ այլն , (ըստ ձեռագրաց . խնդիր Յունաց , և բացատրութիւն Ներսէսի Լամբրոնացւոյ . 'ի Տիեզերական Ժողովոյն Տարանի . որ եղև . 626 թուականին Հայոց) :

Նմանապէս Լատինացւոց եկեղեցւոյն արարողութիւնը հաստատ վկայութիւն կուտայ մեր աւանդութեանց վաւերականութեանը , զի ըստ պատմելոյ Յակոբ Աստուածաբանին և Հ. Մ. Չամչեանին և այլոց . թէ՛ տարին անգամ մի աւագ ուրբաթին 'ի դէմն խաչին ծունր կրկնելով նոյն սուրբ Աստուածն կ'երգեն առ խաչելեալն Յիսուս . թէ և առանց խաչեցարի . ասկէ կը մակարերուի թէ՛ 'ի հնումն խաչեցարիւ կամ առանց խաչեցարի 'ի դէմն որդւոյն Աստուծոյ կ'երգեն եղեր :

Արդ՝ աւելի եւս հաստատ վկայութիւն է այսքան ազգաց և ազանց և եկեղեցեաց համաձայն վկայութիւնը (այսինքն՝ Հայոց , Յունաց , Լատինաց , Մարոնաց և այլոց ազգաց) , քան թէ օդաթռիչ տղու մը վկայութիւնը (որ Յոյները կ'առասպելեն) . թէպէտ և սոյն հետաքրքրական բանն ալ մեր աւանդութեանը բաւական սպառցոյց մընէ . սուրբ Աստուածը խաչեցարիւ երգելնուս : Ըստ որում , թէ որ մինչև նոյն ատենը , կամ սուրբ Աստուած չէին երգեր , և կամ առանց խաչեցարի կ'երգէին , և ի՞նչ

պէտք էր . որ այն տղէն սուրբ Աստուածը առանց խաչեցարի ըսելը նորէն սովրէին , երբոր յառաջ առանց խաչեցարի կ'երգէին նէ . բայց գործը և եղելութիւնը յայտնի կը վկայէ , թէ՛ մինչեւ նոյն ժամանակը սուրբ Աստուածը խաչեցարիւ կ'երգեն եղեր . սակայն տարածայնութիւն և հակառակութիւն մը պատճառելով այս արարողութեան վրայ (այսինքն խաչեցարիւ երգելոյ) ստիպուեր են օղաթուիչ տղու մը վկայութեանը ապաւինելու որ խաչեցարը վերցունեն . վասն զի այս պատմողները՝ աւելի կը ջանան անով սուրբ Աստուածը առանց խաչեցարի ըսելը հաստատել , քան թէ ճշմարտութեան վկայութիւն մը տալ : Բայց անով ալ բան մը չեն շահիր . ինչու որ՝ դիցուք թէ՛ ատանկ բան մը եղած ըլլայ , ատկէց ինչ պէտք էր , որ եկեղեցւոյ արարողութիւնը խանգարել և այլայլել ֆրիստոսի մեծ վայելչական փառաբանութիւնը , ու եկեղեցւոյ մէջ վէճ յարուցանել . իբր թէ՛ այն տղան ըսած ըլլայ որ՝ « Հրեշտակները սուրբ Աստուածը առանց խաչեցարի կ'երգեն » եղեր : Իրաւունք ունին հրեշտակները ատանկ երգելու . ըստ որում գիտէին՝ որ մարդուս փրկութեանը համար խաչեցաւ ֆրիստոս , և ո՛չ վասն յանցաւոր հրեշտակաց . անոր համար՝ չէր վայլեր իրենց ըսել , « վասն մեր խաչեցար » : Իսկ մեք՝ ինչպէս մարմնացելոյն Աստուծոյ և խաչեցելոյն

վասն մեր , այս մեղի ըրած մեծ երախտի.քը առանց յիշատակի թողուլ ու չըսել թէ՛ « Խաչեցար վասն մեր » , իբր թէ՛ հրեշտակները այնպէս չեն ըսեր եղեր . մենք չե՛նք հրեշտակներ՝ այլ որդիք Աբրահամու ըստ հաւատոց . « քանզի ո՛չ հրեշտակաց բուռն հարկանէ . այլ զլաւակէն Աբրահամու » . ասէ առաքեալն : Եւ զարմանալին այն է որ՝ ի՛նչպէս համարձակեր են առաքելաւանդ արարողութիւնը այլայլելու ասանկ անդիտելի տղու մը վկայութեամբը . և չե՛ն մի ակնածութիւն ըրեր առաքելական սաստէն , որ կը զուրցէ . թէ՛ « Եթէ մեք և կամ հրեշտակք յերկնից աւետարանեացէ ձեզ , աւելի քան զոր աւետարանեցաքն , նզովեալ եղիցի » : (Գաղա . Ա . 8) : Ապա ո՛ւր կը մնայ անձանօթ տղու մը վկայութիւնը . . . :

Ասկէց Աստուածաչարչարութեան երկիւղ և կասկած հետեւցնելն ալ , ըստ ոմանց հերետիկոսաց , անմտութիւն է . երբոր նոյն երգն առ Քրիստոս կ'երգի . « որդին Մարիամու և Աստուծոյ մերոյ , բարեխօսութեամբ մօր իւրոյ անարատի » . ինչպէս յայտնի է նախընթաց աղօթքներէն և հետեւեալ մաղթանքէն առ սուրբ Աստուածածինն . (ինչպէս որ վերը Ձահկեցի Աստուածաբանն վարդապետն մեր զրուցեց) . թող որ՝ ըստ Աստուածաբանից և Փիլիսոսփայից՝ դորձողութիւնք ենթադրելոց են . ինչպէս որ՝ չենք հարցուներ . թէ՛ աս դիրք ո՞ր

մատուրները գրեց, այլ թէ ո՞վ գրեց. ասոր համար՝ «Աստուած խաչեցաւ» կըսվի. վասն զի ենթագրեալն Աստուածային անձն է, ուստի կըսվի «Աստուած խաչեցաւ». չէ թէ մարդը կամ մարմինը խաչեցաւ : Այս բանիս վրայօք սուրբ Ներսէս շնորհալի հայրապետը, սուրբ Գրիգոր աստուածաբանէն առնելով կ'գրէ այսպէս. «Դարձեալ՝ և զմարմնոյն յատուկան՝ է զի Աստուածութեանն տան, որպէս Աստուած խաչեալ, և արիւն Աստուծոյ, և չարչարանս, և մահս ըստ Աստուածաբանին Գրիգորի, և այլոց սրբոցն, և այստքիկ զի՛նչ այլ եթէ ոչ՝ զանճառ միաւորութիւնն, և զանբաժանելին դող նշանակին» . (Ընդհանրական) : Նոյնպէս բարուք կը գրէ Մատթէոս սրբազան կաթողիկոսն՝ ՚ի Հանդիսարանին . երես 383 . առնելով Լատին աստուածաբաններէն՝ ըսելով այսպէս . «Յիսուս Քրիստոսը խաչեալ խոստովանելու է, ոչ թէ միայն ձայնիւ երգելով, այլ և սրտիւ հաւատալով» . կըսէ Լեբրոն Լատին աստուածաբանը ՚ի ճառ խաչին : Եւ Աւիղիոս երեւելին ՚ի հարց անտի Լատինացւոց եկեղեցւոյն՝ կը գրէ առ Յոյնս ՚ի ժամանակս կնափոսի . եթէ՝ «՚ի դէմս Քրիստոսի ասելով զսուրբ Աստուածն՝ հօրկ է խաչեցարիւ ասել . ապա թէ ոչ՝ այդ իսկ է բառնալ ՚ի միջոյ զհիմն քրիստոնէութեան» . յերրորդ նամակ : կը զարմանամք ուրեմն, ի՞նչպէս Հռովմի անուամբ մենէ հերձեալները սուրբ

Աստուածը 'ի դէմս Որդւոյ կերդեն անանց
խաչեցարի . ու սուրբ Աստուածէն առաջ ա-
ղօթքը մեզ նման 'ի դէմս Որդւոյ կը զրուցեն ,
և հետեւեալ Փառաւորեալ մաղթանքը առ
Մայրն ողորմութեան կուղղեն : Թէպէտ շատ
հաստատուն վկայութիւններ կան ասոնց պէս ,
նչ միայն Ղատինացւոց հարց . այլ և 'ի նախնի
սրբոց հարց ընդհանուր եկեղեցեաց . սակայն
թէ Հռովմէական և թէ Յունական եւայն ե-
կեղեցեաց ընդունած երեւելի հայրապետի մը
վկայութիւնը հերիք կը սեպենք . դուցէ մեր
հակառակորդները անոր խօսքէն համոզուին .
որ կրսէ Քաղկեթոնի ժողովոյն դրած կոնդա-
կին մէջը . թէ՛ « Արդ՝ յաղագս այսը միու-
թեան անձին՝ յերկաքանչիւր բնութեան իմա-
ցելոյ , և որդի մարդոյ վերծանի իջեալ յերկ-
նից , երբ որդին Աստուծոյ էառ զմարմին 'ի
կուսէ անտի՝ յորմէ ծնաւ : Եւ Դարձեալ՝ ոչ ոն
Աստուծոյ խաչեալ ասի և խաչեալ . երբ զայստսիկ ոչ
'ի բուն Աստուածութեան , որով միածինն
մշտնջենաւորակից և համագոյակից է Հօր . այլ՝
'ի մարդկային բնութեանն տկարութեան կը-
րեաց » :

« Ուստի զբաժնն որդին Աստուծոյ խաչեալ և խա-
չեալ խոստովանիմք ամենեւին նաեւ 'ի հանգանակի » . եւ-
այն : Եւ կ'ապացուցանէ ալ մեր ճշմարտու-
թիւնը առաքեալէն վկայութիւն բերելով . թէ՛
« Զի թէ էր ծանուցեալ , ոչ երբէք զտէրն վա-

ուայ 'ի խաչ հանէին » : Ըստ այսմ դաւանութեան է՝ և Հանդանակին իմաստը . ինչպէս որ լեւոն հայրապետը վերը նշանակեց , « 'ի հանդանակին խոստովանիմք ամենեքին » , ըսելով , որ և է այսպէս . « Հաւատամք և 'ի մի տէր Յիսուս Գրիստոս որդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ հօրէ միածին՝ այսինքն յէութենէ հօր . Աստուած յԱստուծոյ , լոյս 'ի լուսոյ , Աստուած ճշմարիտ , յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արարած որ յաղաղս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարելագէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով . . . շարչարեալ , խաչեալ , խաղեալ , յերրորդ աւուր յարուցեալ ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր » . եւայլն » : Այս բան յերուն՝ այսինքն , մարմնացաւ , մարդացաւ , ծնաւ , շարչարեալ , խաչեալ , թաղեալ , յարուցեալ , ելեալ , եւայլն . անուն բային , է Աստուած յԱստուծոյ , լոյս 'ի լուսոյ , Աստուած ճշմարիտ , ծնունդ , և ոչ արարած . ու ասոնց յարաբերականը « ՈՐ » (Բանն Աստուած) :

Ուրեմն անտի ամբաստանութիւն , և մանաւանդ հայհոյութիւն է , որ այսքան ապացուցական և յայտնի ճշմարտութեան դէմ մաքաւելով քար կը նետեն մեր սուրբ եկեղեցւոյն . թէ՛ « Սուրբ Աստուածը խաչեցարով կ'երգեն , Աստուածաշարչար համարելով , և

մենք ալ կը զարմանամք . թէ՛ Հաւատամքը որ մեզի պէս կըսեն իրենք , ու Աստուածաչարչար չէ՛ն սեպուիր . մենք սուրբ Աստուածը խաչեցարով ըսելուս համար , ի՞նչպէս Աստուածաչարչար ըսելու կը յանդգնին . ահա՛ տեսնեն՝ որ մեր եկեղեցւոյ վրայ արատ դնելը ասանկ անտարբեր բաներու մէջ նախնի կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ և առաքելական աւանդութեանց և աւետարանական վարդապետութեանց դէմ մուր քսել է . և հետեւաբար խղճմտանաց դէմ մեղանչել է . ըստ որում ինքը Քրիստոս իր Աստուածային բերնովը կը վրկայէ . « Ե՛ս եմ՝ սկիզբն . և Ե՛ս եմ՝ վախճան . Ե՛ս եմ՝ կեանք . և Ե՛ս եմ՝ որ մեռայն . և ահաւասիկ կենդանի եմ » : (Յայտ . Ա . 17) :

Ահա այս է մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատքը այս մասին , ուստի աւելորդ կը համարիմք ծանուցանել թէ վերոյիշեալ « Ժամագիրքը , որ « կարդաւորութիւն հասարակաց աղօթից » անուաներ են , Հայաստանեայց Եկեղեցւոյ աբարողութեան ճիշտը չըլլալով հարկը ստիպեց զմեզ ծանուցանել հասարակութեան : Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ :



1848. Die erste Ausgabe des Buches ist im Jahre 1848 erschienen. Die zweite Ausgabe ist im Jahre 1850 erschienen. Die dritte Ausgabe ist im Jahre 1855 erschienen. Die vierte Ausgabe ist im Jahre 1860 erschienen. Die fünfte Ausgabe ist im Jahre 1865 erschienen. Die sechste Ausgabe ist im Jahre 1870 erschienen. Die siebente Ausgabe ist im Jahre 1875 erschienen. Die achte Ausgabe ist im Jahre 1880 erschienen. Die neunte Ausgabe ist im Jahre 1885 erschienen. Die zehnte Ausgabe ist im Jahre 1890 erschienen. Die elfte Ausgabe ist im Jahre 1895 erschienen. Die zwölfte Ausgabe ist im Jahre 1900 erschienen. Die dreizehnte Ausgabe ist im Jahre 1905 erschienen. Die vierzehnte Ausgabe ist im Jahre 1910 erschienen. Die fünfzehnte Ausgabe ist im Jahre 1915 erschienen. Die sechzehnte Ausgabe ist im Jahre 1920 erschienen. Die siebenzehnte Ausgabe ist im Jahre 1925 erschienen. Die achtzehnte Ausgabe ist im Jahre 1930 erschienen. Die neunzehnte Ausgabe ist im Jahre 1935 erschienen. Die zwanzigste Ausgabe ist im Jahre 1940 erschienen. Die einundzwanzigste Ausgabe ist im Jahre 1945 erschienen. Die zweiundzwanzigste Ausgabe ist im Jahre 1950 erschienen. Die dreiundzwanzigste Ausgabe ist im Jahre 1955 erschienen. Die vierundzwanzigste Ausgabe ist im Jahre 1960 erschienen. Die fünfundzwanzigste Ausgabe ist im Jahre 1965 erschienen. Die sechsundzwanzigste Ausgabe ist im Jahre 1970 erschienen. Die siebenundzwanzigste Ausgabe ist im Jahre 1975 erschienen. Die achtundzwanzigste Ausgabe ist im Jahre 1980 erschienen. Die neunundzwanzigste Ausgabe ist im Jahre 1985 erschienen. Die dreißigste Ausgabe ist im Jahre 1990 erschienen. Die einunddreißigste Ausgabe ist im Jahre 1995 erschienen. Die zweiunddreißigste Ausgabe ist im Jahre 2000 erschienen. Die dreiunddreißigste Ausgabe ist im Jahre 2005 erschienen. Die vierunddreißigste Ausgabe ist im Jahre 2010 erschienen. Die fünfunddreißigste Ausgabe ist im Jahre 2015 erschienen. Die sechsunddreißigste Ausgabe ist im Jahre 2020 erschienen. Die siebenunddreißigste Ausgabe ist im Jahre 2025 erschienen. Die achtunddreißigste Ausgabe ist im Jahre 2030 erschienen. Die neununddreißigste Ausgabe ist im Jahre 2035 erschienen. Die vierzigste Ausgabe ist im Jahre 2040 erschienen. Die einundvierzigste Ausgabe ist im Jahre 2045 erschienen. Die zweiundvierzigste Ausgabe ist im Jahre 2050 erschienen. Die dreiundvierzigste Ausgabe ist im Jahre 2055 erschienen. Die vierundvierzigste Ausgabe ist im Jahre 2060 erschienen. Die fünfundvierzigste Ausgabe ist im Jahre 2065 erschienen. Die sechsundvierzigste Ausgabe ist im Jahre 2070 erschienen. Die siebenundvierzigste Ausgabe ist im Jahre 2075 erschienen. Die achtundvierzigste Ausgabe ist im Jahre 2080 erschienen. Die neunundvierzigste Ausgabe ist im Jahre 2085 erschienen. Die fünfzigste Ausgabe ist im Jahre 2090 erschienen. Die einundfünfzigste Ausgabe ist im Jahre 2095 erschienen. Die zweiundfünfzigste Ausgabe ist im Jahre 2100 erschienen.



Թ. Ա.

№ 6992

Գին 60 փարսյ :